SIEMENS ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՄԱԾՁԲ-2020/17-ԵՊԲՀ»

ք.Երևան « » « » 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Հարությունովի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Siemens արտադրության բժշկական սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցված ծառայության գինը կազմում է մինչև 7.000.000,00 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Դեմիրճյան 40, տարածք 173
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 1660004508650100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02264261
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ info@siemtech.sk
	Հեռ. (011) 800 700
	Տնօրեն՝ Ա.Հարությունով
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.05 14:15:30 AMST

VARDAZARYAN VADIM 2309820237

Digitally signed by VARDAZARYAN VADIM 2309820237
DN: c=AM, sn=•••••••••••, givenName=•••••, serialNumber=64f446dd89aa, cn=VARDAZARYAN VADIM 2309820237
Date: 2020.05.04 14:07:42 +04'00'

Հավելված N 1
« » « » 2020թ. կնքված
«ՄԱԾՁԲ-2020/17-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50421100	նայել ստորև, կետ 1	հատ	2.400.000,00	8	ք.Երևան, Աբովյան 60 և/կան Մուրացան 114	2020 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսներ
2	50421100	նայել ստորև, կետ 2	դրամ	4.600.000,00	1	ք.Երևան, Աբովյան 60 և/կան Մուրացան 114	2020 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսներ
ԸՆԴԱՄԵՆԸ				**7.000.000,00**			

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

1. **Siemens արտադրության Angiograf Artis Zee անգիոգրաֆի ամսեկան սպասարկման ծառայություն**

1. Սպասարկման աշխատանքները պետք է կատարվեն արտադրողի համապատասխան տեխնիկական ձեռնարկների պահանջների համաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև արտադրողի համապատասխան ծառայությունների համաձայնությամբ:
2. Սարքավորումների սպասարկման աշխատանքները ներառում են՝
2.1 Պրոֆիլակտիկ այց՝ անսահմանափակ, բայց ոչ պակաս քան ամիսը 2 ամգամ:
2.2 Հետազոտում, խափանման հայտնաբերում՝ սարքի խափանման դեպքում դեպքում, կանչի պահից սկսած առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ներառյալ ոչ աշխատանքային օրերը:
2.3 Արտադրողի կողմից նախատեսված սպասարկում՝ տարին մեկ անգամ՝ սերտիֆիկացված մասնագետի կողմից: Այն նախատեսում է բոլոր շարժվող համակարգերի յուղում և մաքրում, համակարգիչների մաքրում և սառեցման համակարգերի ստուգում, վերալիցքավորում:
2.4 Ռենտգեն խողովակի փոխարինում, անհրաժետության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.5 Նկարի ընդունման հանգույցի փոխարինում՝ անհրաժետության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.6 Համակարգչի վերանորոգում՝ անհրաժետության դեպքում:
2.7 Բարձր լարման սնուցման հանգույցի փոխարինում՝ անհրաժետության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.8 Էլեկտրական սալիկի փոխարինում՝ անհրաժետության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.9 Հետազոտում, խափանման հայտնաբերում՝ սարքի խափանման դեպքում դեպքում, կանչի պահից սկսած առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ներառյալ ոչ աշխատանքային օրերը:
2.10 Սառեցման համակարգի վերանորոգում՝ անհրաժետության դեպքում:
2.11 Տպիչի փոխարինում՝ անհրաժետության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:

2.12 Կոլիմատորի վերանորոգում, փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.13 Ծրագրային ապահովման վերաբեռնում՝ անհրաժեշտության դեպքում:
2.14 Հետազոտման սեղանի վերանորոգում՝ անհրաժեշտության դեպքում:
2.15 Պոմպի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.16 Սեղանի բարձրացման շարժիչի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.17 Ստենդի շարժման շարժիչի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.18 Ռենգեն ճառագայթման ազդանշանային լույսերի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.19 Բարձր լարման տրանսֆորմատորի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.20 Ինվերտորի կառավարման սալիկի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.21 Դետեկտորի սնուցման սարքի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.22 Սեղանի արգելակների փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.23 Մեխանիկական մասերի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.24 Ղեկավարման վահանակի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.25 Հիմնական սնուցման սարքի փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
2.26 Մոնիտորների փոխարինում՝ անհրաժեշտության դեպքում: Չի ներառում փոխարինվող պահեստամասի արժեքը:
3. Կատարողը արտապլանային /վթարային/ աշխատանքներ կատարելու համար՝ ոչ պլանային այցելությունների դեպքում, պետք է տեղեկացնի այդ մասին պատվիրատուին այդպիսի աշխատանքներիը սկսելուց ոչ պակաս, քան 3 ժամ առաջ: Հատուկ դեպքերում, երբ անհրաժեշտ է իրականացնել առաջացած խնդիրների անհապաղ շտկման աշխատանքներ, Կատարողը կարող է տեղեկացնել Պատվիրատուին այդ աշխատանքները սկցելուց անմիջապես առաջ:
4. Սարքավորման շահագործմանը և պահպանմանը նպաստող միջոցառումների վերաբերյալ խորհրդատվական տեղեկությունների տրամադրում:
5. Կատարողը չի կրում որևէ պատասխանատվություն այլ աղբյուրներից /ոչ արտադրողից/ ձեռքբերած և օգտագործման համար տրամադրած պահեստամասերի շահագործման հետևանքով սարքավորման ոչ պիտանի դառնալու համար:
6. Սպասարկման աշխատանքների մատուցման պարբերականությունը և կատարման ժամկետները սահմանում է Կատարողը՝ արտադրողի կողմից համապատասխան ձեռնարկներում սահմանված սարքի տեխնիկական սպասարկման ծավալներին, ժամկետներին և տեխնոլոգիաներին համապատասխան, սակայն ոչ պակաս քան նշված է 2-րդ կետում:
7. Փոխարինման ենթակա պահեստամասերի փոխարինման ժամկետ՝ 24 ժամվա ընթացքում, պահեստամասի առկայության դեպքում:
8. Առանձին դեպքերում, բարդ վերանորոգման կամ կարգաբերման աշխատանքներ իրականացնելու համար Կատարողը պետք է ապահովի սարքի կամ սարքի համապատասխան հանգույցի տեղափոխումը Կատարողի համապատասխան արտադրամաս (սպասարկման կենտրոն) կամ արտադրող գործարան:
9. Սպասարկման աշխատանքները իրականացվում են միայն սույն պայմանագրով նախատեսված սարքավորումների համար, այն իր մեջ չի ներառում հարակից կամ օժանդակ այլ սարքավորումների սպասարկում, թեկուզև դրանք ապահովում են սարքավորման բնականոն աշխատանքը:
10. Սպասարկման աշխատանքները, իրականացվում են աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին և ժամերին:

2. *Siemens արտադրության սարքավորումների /Iconos R200, Iconos R100, Magneton C, Acuson x 700, Acuson x 300, Modularis Variostar Lithotripter/ լրացուցիչ՝ ըստ պահանջի, սպասարկման ծառայություն*

ՀՀ	Ծառայության նկարագրություն	Iconos R200	Iconos R100	Magneton C	Acuson x 700	Acuson x 300	Modularis Variostar Lithotripter
1	Պրոֆիլակտիկ այց	84000	84000	108000	60000	60000	-
2	Հետազոտում (խափանման հայտնաբերում)	108000	84000	264000	60000	60000	100000
3	Արտադրողի կողմից նախատեսված սպասարկում	660000	420000	984000	84000	84000	250000
4	Ռենտգեն խողովակի փոխարինում	372000	264000	-	-	-	200000
5	Նկարի ընդունման հանգույցի փոխարինում	-	-	-	-	-	200000
6	Համակարգչի վերանորոգում	84000	-	132000	-	-	150000
7	Բարձր լարման սնուցման հանգույցի փոխարինում	-	-	-	-	-	60000
8	Էլեկտրական սալիկի փոխարինում	156000	120000	198000	84000	84000	80000
9	Սառեցման համակարգի վերանորոգում	-	-	198000	-	-	120000
10	Տվիչի փոխարինում	108000	108000	-	-	-	50000
11	Կոլիմատորի վերանորոգում, փոխարինում	216000	120000	-	-	-	100000
12	Ծրագրային ապահովման վերաբեռնում	324000	216000	360000	96000	96000	90000
13	Հետազոտման սեղանի վերանորոգում	204000	162000	180000	-	-	70000
14	Կոմպրեսորների փոխարինում	-	-	330000	-	-	-
15	Պոմպի փոխարինում	-	-	198000	-	-	-
16	Սեղանի բարձրացման շարժիչի փոխարինում	420000	420000	-	-	-	-
17	Սյունի շարժիչի փոխարինում	264000	198000	-	-	-	-
18	Կենտրոնացնող լամպերի եւ լազերների փոխարինում	42000	42000	66000	-	-	-
19	Բարձր լարման տրանսֆորմատորի փոխարինում	330000	264000	-	-	-	-
20	Ինվերտորի կառավարման սալիկի փոխարինում	132000	108000	-	-	-	-
21	Սեղանի շարժիչների ինվերտորների փոխարինում	198000	162000	-	-	-	-
22	Սեղանի արգելակների փոխարինում	108000	84000	198000	-	-	-
23	Մեխանիկական մասերի փոխարինում	66000	66000	96000	-	-	-
24	Ղեկավարման վահանակի փոխարինում	96000	66000	-	-	-	-
25	ՄՌՏ կոճերի փոխարինում	-	-	144000	-	-	-
26	Հիմնական սնուցման սարքի փոխարինում	108000	66000	198000	72000	72000	-
27	Մոնիտորների փոխարինում	66000	66000	66000	60000	60000	-
28	Մագնիսական դաշտի կարգաբերում 1-ին մակարդակ	-	-	2400000	-	-	-
29	Ընդհանուր համակարգի կարգաբերում	-	-	1800000	-	-	-

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.05 14:15:47 AMST

ՎԱՃԱՌՈՂ

«Սիմռայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Դեմիրճյան 40, տարածք 173
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004508650100
ՀՎՀՀ 02264261
էլ. հասցեն՝ info@siemtech.sk
Հեռ. (011) 800 700
Տնօրեն՝ Ա.Հարությունով

/ստորագրություն/
Կ.Տ

VARDAZARYAN VADIM 2309820237

Digitally signed by VARDAZARYAN VADIM 2309820237
DN: c=AM, sn=••••••••••••, givenName=•••••, serialNumber=64f446dd89aa, cn=VARDAZARYAN VADIM 2309820237
Date: 2020.05.04 14:08:36 +04'00'

Հավելված N 2
« » « » 2020թ. կնքված
«ՄԱԾՁԲ-2020/17-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50421100	Siemens արտադրության Angiograf Artis Zee անգիոգրաֆի ամսեկան սպասարկման ծառայություն	-	-	-	-	300.000,00	600.000,00	900.000,00	1.200.000,00	1.500.000,00	1.800.000,00	2.100.000,00	2.400.000,00	**2.400.000,00**
2	50421100	Siemens արտադրության սարքավորումների /Iconos R200, Iconos R100, Magneton C, Acuson x 700, Acuson x 300, Modularis Variostar Lithotripter/ լրացուցիչ՝ ըստ պահանջի, սպասարկման ծառայություն	-	-	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	**100%**

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: 2-րդ չափաբաժնով սահմանված ծառայության մասով վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով ըստ մատուցված ծառայությունների ծավալի՝ բայց ոչ ավել քան 4.600.000,00 ՀՀ դրամ:**

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.05 14:16:08 AMST

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սիմոայս Մեդիքալ Սփլայ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Դեմիրճյան 40, տարածք 173
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004508650100
ՀՎՀՀ 02264261
Էլ. հասցեն՝ info@siemtech.sk
Հեռ. (011) 800 700
Տնօրեն՝ Ա.Հարությունով

VARDAZARYAN VADIM 2309820237

Digitally signed by VARDAZARYAN VADIM 2309820237
DN: c=AM, sn=••••••••••, givenName=••••••, serialNumber=64f446dd89aa, cn=VARDAZARYAN VADIM 2309820237
Date: 2020.05.04 14:09:26 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2020թ. կնքված
«ՄԱԾՁԲ-2020/17-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2019թ. կնքված
«ՄԱԾՁԲ-2020/17-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն